

**ԱՆՏԱՌԱՐԱՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Պատրաստված է

**Էկո-Հայաստան դաշինքի
«Փրկենք մեր անտառները» քարոզարշավի համար**

**Դոկտոր Լուսիկ Հ. Դանիելյան, Տնօրեն
Անի Դալլաթյան, Ավագ գիտաշխատող**

**Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոն
Հայաստանի ամերիկյան համալսարան**

Հունիս 2007

Չիմնական արդյունքների ամփոփում

Անտառահատումների և անտառների պահպանության նկատմամբ վերաբերմունքը

- Չայաստանի տասը քաղաքացիներից ինը հետաքրքրված են Չայաստանում անտառների պահպանությամբ:
- Չայաստանի տասը քաղաքացիներից միայն չորսն են առնվազն «որոշ չափով բավարարված» Չայաստանում անտառների պահպանությամբ:
- Գրեթե բոլոր քաղաքացիները կարծում են, որ անտառները կարևոր են բույսերի և կենդանիների բազմազանությունը երկարաժամկետ պահպանելու, հասարակությանը պաշտպանելու այնպիսի բացասական ազդեցություններից, ինչպիսիք են անապատացումը, հողի էրոզիան և ջրհեղեղները, ու հանգստի և ժամանցի համար նախատեսված վայրեր ունենալու համար: Տասը քաղաքացիներից ութը նշել են, որ անտառները կարևոր են փայտի պաշարը երկարաժամկետ ապահովելու համար:
- Գրեթե բոլոր քաղաքացիները կարծում են, որ յուրաքանչյուր անձ Չայաստանում պետք է անձնական պատասխանատվություն կրի շրջակա միջավայրի համար, և անտառները պետք է փրկել՝ ի օգուտ մարդկանց և շրջակա միջավայրի:
- Չայաստանի տասը քաղաքացիներից ինը մտահոգված են, որ իրենց երեխաներն ապրելու են ավելի վատ շրջակա միջավայրում, քան իրենք հիմա:
- Տասը քաղաքացիներից յոթը կարծում են, որ Չայաստանի էկոլոգիական ճգնաժամը չափազանցված չէ:
- Գրեթե բոլոր քաղաքացիները համաձայնել են, որ «անտառահատումը լուրջ խնդիր է Չայաստանում», և տասը քաղաքացիներից ինը չեն համաձայնել, որ «մենք դեռ բավականին շատ անտառներ ունենք Չայաստանում, և անտառահատումը լուրջ խնդիր չէ»:
- Չայաստանի քաղաքացիների մոտ երկու երրորդը կարծում է, որ Չայաստանում անտառների վիճակը վատացել է վերջին հինգ տարիների ընթացքում:
- Գրեթե բոլոր քաղաքացիները համաձայնել են, որ «կարելի է փայտ հավաքել անտառներից՝ ճիշտ և ռացիոնալ կառավարման դեպքում»:
- Տասը քաղաքացիներից ինը կարծում են, որ «եթե աղքատությունը նվազեր, ապա կնվազեր նաև վառելիքափայտի համար անտառի ապօրինի օգտագործումը»:
- Տասը քաղաքացիներից յոթը կտեղեկացնեին անտառի ապօրինի հատումների մասին, եթե դրանց ականատես լինեին:
- Չայաստանի քաղաքացիների կողմից նշված՝ Չայաստանում անտառահատումների հիմնական պատճառներն են՝ անհատ գործարարները, որոնք փայտ են արտահանում Չայաստանից, անհատ գործարարները, որոնք փայտ են վաճառում Չայաստանում, և գյուղերից դուրս մարդիկ, որոնք ծառ են հատում վաճառքի համար:

- Չայաստանի քաղաքացիները 9.5 գնահատականը (1-ից մինչև 10 սանդղակում, որտեղ 10-ը նշանակում է «գերազանց լուծում») տվել են հետևյալ լուծմանը՝ Չայաստանի բոլոր տնային տնտեսություններին գազը հասանելի դարձնել:
- Գրեթե բոլոր քաղաքացիները համաձայնել են, որ «Չայաստանի կառավարությունը պետք է թույլ չտա փայտանյութի արտահանումը»:

Անտառահատումների մասին գիտելիքի մակարդակը

- Չայաստանի տասը քաղաքացիներից վեցը նշել են թթվածնի պակասը որպես անտառտարածքների կորստի հիմնական ազդեցությունը իրենց և իրենց ընտանիքների վրա:
- Տասը քաղաքացիներից ինը կարծում են, որ անտառային հողերի կրճատման հետևանքով կարող են առաջանալ սնկերի, խոտաբույսերի և հատապտուղների կորուստ, միկրոկլիմայի փոփոխություն և կենսաբազմազանության կորուստ:
- Չայաստանի քաղաքացիների կողմից նշված՝ անտառահատումների առաջին չորս բացասական հետևանքներն են. միկրոկլիմայի փոփոխությունը, անապատացումը, աղբյուրների և գետերի ցամաքումը ու կենսաբազմազանության կորուստը:

Անտառների օգտագործումը

- Չայաստանի տասը քաղաքացիներից յոթը գնում են անտառ հանգստի և ժամանցի նպատակով, մինչդեռ տասից հինգը գնում են ոչ փայտանյութ, այլ օրինակ, խոտաբույսեր հավաքելու համար:
- Չայաստանի քաղաքացիների 14 տոկոսը գնում է անտառ՝ տան համար վառելափայտ հավաքելու նպատակով:
- Շատ ավելի գյուղական և մարզերի բնակիչներ, քան քաղաքային և Երևանի բնակիչներ են անտառում վառելափայտ հավաքում տան համար: Նմանապես, շատ ավելի անտառներին մոտ գտնվող գյուղերի բնակիչներ, քան անտառներից հեռու գտնվող գյուղերի բնակիչներ են գնում անտառ այդ նպատակով:

Ներածություն

Էկո-Յայաստան դաշինքը նախաձեռնել է մի քարոզարշավ, որի նպատակն է վերհանել Յայաստանի անտառահատումների բազմաշերտ խնդիրը և փորձել լուծել այն «Փրկենք մեր անտառները» արշավի միջոցով: Դաշինքը կազմված է Յայաստանում գործող ակտիվ և արդյունավետ բնապահպանական կազմակերպություններից՝ Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, Յայաստանի ամերիկյան համալսարանի Շրջակա միջավայրի պահպանության հետազոտական կենտրոն, «Յայաստան ծառատունկ ծրագիր» հիմնադրամ և «Յայաստանի անտառներ» հասարակական կազմակերպություն: Քարոզարշավը, ընդհանուր առմամբ, կներառի ամբողջական մի ծրագիր, որի հիմքում են բնական ռեսուրսների միասնական ղեկավարումը, տնտեսական զարգացումը և արդյունավետ կառավարումը Յայաստանում: «Փրկենք մեր անտառները» քարոզարշավը նպատակ ունի ներկայացնելու և խթանելու Յայաստանում անտառահատումների խնդրի առնչությամբ մի շարք լուծումներ:

Պայմանագիր է կնքվել Յայաստանի ամերիկյան համալսարանի (ՅԱՅ) Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոնի (ԹՅԴԿ) հետ՝ հանրային իրազեկման քարոզարշավի մշակման համար տեղեկատվություն տրամադրելու նպատակով հարցում անցկացնելու համար: Յայաստանի ամբողջ տարածքում իրականացված այս հարցման նպատակն է պարզել հասարակության՝ անտառների և անտառահատումների ըմբռնումն ու գիտելիքի մակարդակը, բացահայտել Յայաստանի հասարակության կարծիքը, վարքագիծը և վերաբերմունքը Յայաստանում անտառների պահպանության առնչությամբ և հասկանալ վառելափայտի օգտագործման առանձնահատկությունները:

Այս զեկույցը ներկայացնում է հարցման արդյունքների մի մասը և հիմնականում անդրադառնում է Յայաստանի բնակչության՝ անտառահատումների և անտառների պահպանության նկատմամբ ունեցած վերաբերմունքին:

Մեթոդաբանություն

Յայաստանի 18-ից մինչև 75 տարեկան քաղաքացիների ներկայացուցչական ընտրանքը որոշելու համար ԹՅԴԿ-ն դիմել է ՀՀ վիճակագրական ազգային ծառայությանը՝ հետևյալ պարամետրերի վերաբերյալ գոյություն ունեցող տեղեկատվությունն ստանալու համար. 1) բնակչության թիվը՝ մարզային կտրվածքով, 2) տասը մարզերից յուրաքանչյուրի բնակչության թիվը՝ գյուղական և քաղաքային բնակիչների կտրվածքով և 3) Երևանի բնակչության թիվը՝ ըստ տասներկու համայնքների: Տնային տնտեսություններն ընտրվել են Երևան քաղաքից և տասը մարզերից համամասնորեն՝ արտացոլելով ՀՀ վերջին մարդահամարի տվյալները: Յուրաքանչյուր մարզից մեկ քաղաք և մեկ գյուղ են մասնակցել հարցմանը: ԹՅԴԿ-ն տասը քաղաքներից յուրաքանչյուրի համար ՀՀ Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոնից ձեռք է բերել մանրամասն քարտեզներ¹: Երևանի դեպքում օգտագործվել է քաղաքի քարտեզը, որում պատկերված են շենքերը՝ ըստ համայնքների: ԹՅԴԿ-ն դիմել է տասը մարզային քաղաքներին և Երևանի տասներկու համայնքներին՝ որոշելու համար բազմաբնակարան շենքերի և սեփական առանձնատների համամասնությունը: Մարզային յուրաքանչյուր քաղաքի և Երևանի յուրաքանչյուր համայնքի համար օգտագործվել են քարտեզներ՝ պարբերական (սիստեմատիկ) պատահական ընտրանքի միջոցով շենքերն ընտրելու համար: Տասը քաղաքներում և Երևանում՝ արդեն տեղում, յուրաքանչյուր բազմաբնակարան շենքից հասարակ պատահական ընտրանքի միջոցով ընտրվել է մեկ տնային տնտեսություն:

¹ Դրանք ի սկզբանե պատրաստվել են ՀՀ 2001-ի մարդահամարի համար:

Այս հետազոտությունը նպատակ ուներ հարցման մեջ ընգրկելու թե՛ անտառներին մոտ գտնվող գյուղերի, թե՛ անտառներից հեռու գտնվող գյուղերի բնակիչներին: Անտառներին մոտ գտնվող գյուղերն² ընտրվել են ընդարձակ անտառտարածքներ ունեցող հինգ մարզերի դեպքում³ (Տավուշի, Լոռվա, Սյունիքի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզեր): Այդ հինգ մարզերից յուրաքանչյուրի համար Հայաստանի ամերիկյան համալսարանի Շրջակա միջավայրի պահպանության հետազոտական կենտրոնի աջակցությամբ ստեղծվել են միայն անտառներին մոտ գտնվող գյուղերի ցուցակները⁴: Այդ հինգ մարզերից յուրաքանչյուրի դեպքում պատահականորեն ընտրվել է անտառին մոտ գտնվող մեկ գյուղ: Մնացած հինգ մարզերի դեպքում յուրաքանչյուր մարզից պատահականորեն ընտրվել է նույնպես մեկ գյուղ: ԹՀՀԿ-ն դիմել է տասը գյուղերի գյուղապետարաններին՝ տնային տնտեսությունների թիվը որոշելու համար, և տնային տնտեսությունները տեղում ընտրվել են պարբերական պատահական ընտրանքի միջոցով: Յուրաքանչյուր գյուղի գազի առկայությունը նույնպես պարզվել է նախօրոք: Արդյունքում, հարցմանը մասնակցել են գազ ունեցող վեց և գազ չունեցող չորս գյուղ:

Տնային տնտեսությունների ներսում հարցվածներն ընտրվել են պատահականորեն: Աղյուսակներ 1-ից մինչև 5-ը ցույց են տալիս անցկացված հարցազրույցների թիվը՝ մարզային կտրվածքով, քաղաքային և գյուղական ընտրանքներում ընդգրկված տնային տնտեսությունների թիվը, անտառներին մոտ կամ անտառներից հեռու գտնվող գյուղերի տնային տնտեսությունների թիվը, ինչպես նաև գյուղում գազի առկայության կտրվածքով: Մարզային քաղաքներում բնակվող հարցվածների 51 տոկոսը և Երևանի համայնքներում բնակվող հարցվածների մոտ 14 տոկոսն ապրում են սեփական առանձնատներում:

ԹՀՀԿ-ն մշակել է չափորոշիչներ ու հատուկ այդ նպատակով կազմված հարցաթերթիկ՝ Էկո-Հայաստան դաշինքի կողմից պահանջվող տեղեկատվության հիման վրա: Չափորոշիչներ մշակելիս ԹՀՀԿ-ն փորձել է գտնել անտառների և անտառահատումների վերաբերյալ այլ երկրներում անցկացված համապատասխան հարցումներ, որոնք ունենան վստահելի և ճշգրիտ չափորոշիչներ⁵: Հարցաթերթիկի բոլոր չափորոշիչները փորձարկվել են, և արվել են համապատասխան շտկումներ: Ընդհանուր հաշվով 2006-ի դեկտեմբերի 6-ից մինչև դեկտեմբերի 19-ը անց է կացվել 1,006 հարցազրույց⁶: Բոլոր տվյալները՝ քանակական և կողավորված որակական, մուտքագրվել են SPSS (վիճակագրական փաթեթ հասարակական ուսումնասիրությունների համար) վերլուծության համար:

Հարցազրույցների վերջում հարցման մասնակիցներին տրամադրվել են «Փրկենք մեր անտառները» քարոզարշավի ակնարկով և նախաձեռնության մեջ ընդգրկված կազմակերպությունների կոնտակտային տվյալներով տեղեկատվական թերթիկներ:

² Սահմանված որպես անտառից 5 կմ հեռավորության վրա գտնվող գյուղեր

³ 1999-ի հունվարի 1-ի դրությամբ՝ համաձայն ՀՀ վիճակագրական ազգային ծառայության տվյալների

⁴ Տվյալները հանվել են Հայաստանի անտառների քարտեզից՝ Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ) ծրագրի օգնությամբ:

⁵ Երկու չափորոշիչ փոխ է առնվել Միացյալ թագավորությունում 1996-ին EU FAIR FP4-CT95-766 ծրագրի շրջանակներում իրականացված սպառողների հարցման և Կանադայում 2005-ին Բրիտանական Կոլումբիայի համալսարանի (Կանադա) Լանդշաֆտի Առաջընթաց Պլանավորման Համագործակցության (ԼԱՊՀ) կողմից իրականացված՝ անտառների կայուն կառավարման մասին հանրային կարծիքի հարցման հարցաթերթիկներից:

⁶ Մերժման տոկոսը 8.5 է:

Հիմնական արդյունքները

Հարցվածների միջին տարիքը 45 է (տե՛ս Աղյուսակ 18), հարցվածների 32 տոկոսը տղամարդիկ են, 68 տոկոսը՝ կանայք (տե՛ս Աղյուսակ 17):

Անտառահատումների և անտառների պահպանության նկատմամբ վերաբերմունքը


Հարցվածների 88 տոկոսը հայտնել է, որ հետաքրքրված է Հայաստանում անտառների պահպանությամբ (տե՛ս Աղյուսակ 6): Քաղաքային և Երևանի բնակիչներն ավելի հետաքրքրված են Հայաստանում անտառների պահպանությամբ, քան գյուղական և մարզերի բնակիչները:

Հարցվածների մեծամասնությունը՝ 57 տոկոսը, նշել է, որ բավարարված չէ Հայաստանում անտառների պահպանությամբ: Հարցվածների գրեթե 44 տոկոսը նշել է, որ «բոլորովին բավարարված չէ» Հայաստանում անտառների պահպանությամբ (տե՛ս Աղյուսակ 12):

Անտառների կարևորությունը Հայաստանի հասարակության համար

Հարցվածների մոտ 96 տոկոսը նշել է, որ անտառները ծառայում են երեք կարևոր նպատակների. բույսերի և կենդանիների բազմազանության երկարաժամկետ պահպանում, հասարակության պաշտպանություն այնպիսի բացասական ազդեցություններից, ինչպիսիք են անապատացումը, հողի էրոզիան և ջրհեղեղները, ու հանգստի և ժամանցի համար նախատեսված վայրերի երկարաժամկետ ապահովում (տե՛ս Աղյուսակներ 11ա-11դ): Հարցվածների 83 տոկոսը նշել է, որ անտառները կարևոր են փայտի պաշարը երկարաժամկետ ապահովելու համար: Գծապատկեր Ա-ն ներկայացնում է անտառների կարևորությունն ըմբռնող հարցվածների տոկոսները:

Գծապատկեր Ա. Անտառների կարևորությունն ըմբռնողների տոկոսները



Բնապահպանական խնդիրներ

Գրեթե բոլոր հարցվածները (98 տոկոս) համաձայնել են, որ «յուրաքանչյուր անձ Չայաստանում պետք է անձնական պատասխանատվություն կրի շրջակա միջավայրի համար» (տե՛ս Աղյուսակ 13ա), ընդ որում մոտ 60 տոկոսը նշել է, որ «խիստ համաձայն է» այդ ձևակերպմանը:

Հարցվածների մոտ 88 տոկոսը հայտնել է, որ մտահոգված է, որ իրենց երեխաներն ապրելու են ավելի վատ շրջակա միջավայրում, քան իրենք հիմա (տե՛ս Աղյուսակ 13գ): Քաղաքային և Երևանի բնակիչներն ավելի հակված են համաձայնելու այդ մտքին, քան գյուղական և մարզերի բնակիչները:

Հարցվածների 71 տոկոսը չի կարծում, որ Չայաստանի էկոլոգիական ճգնաժամը չափազանցված է, ընդ որում 24 տոկոսը նշել է, որ բոլորովին համաձայն չէ, որ այն չափազանցված է (տե՛ս Աղյուսակ 13է):

Հարցվածների գրեթե 100 տոկոսն ասել է, որ «անտառները պետք է փրկել` ի օգուտ մարդկանց և շրջակա միջավայրի» (տե՛ս Աղյուսակ 13ը):

Անտառահատման խնդիրը

Գրեթե բոլոր հարցվածները (95 տոկոս) համաձայնել են, որ «անտառահատումը լուրջ խնդիր է Չայաստանում», ընդ որում մոտ 55 տոկոսն ասել է, որ խիստ համաձայն է այդ կարծիքին (տե՛ս Աղյուսակ 13բ):

Հարցվածների մոտ 86 տոկոսը չի համաձայնել այն ձևակերպմանը, որ «մենք դեռ բավականին շատ անտառներ ունենք Չայաստանում, և անտառահատումը լուրջ խնդիր չէ», ընդ որում 34 տոկոսը հայտնել է, որ խիստ համաձայն է այդ մտքին (տե՛ս Աղյուսակ 13ե):

Հարցվածների գրեթե 61 տոկոսը նկատել է, որ անտառների վիճակը Չայաստանում վերջին հինգ տարիների ընթացքում վատացել է (տե՛ս Աղյուսակ 13ժ):

Վառելավայրի համար անտառի օգտագործումը

Հարցվածների 94 տոկոսն ասել է, որ եթե աղքատությունը նվազեր, ապա կնվազեր նաև վառելավայրի համար անտառի ապօրինի օգտագործումը (տե՛ս Աղյուսակ 13դ):

Հարցվածների 97 տոկոսը հայտնել է, որ «կարելի է փայտ հավաքել անտառներից` ճիշտ և ռացիոնալ կառավարման դեպքում» (տե՛ս Աղյուսակ 13թ):

Անտառի ապօրինի հատումները

Հարցվածների 67 տոկոսը կտեղեկացներ պաշտոնյաներին, եթե ականատես լիներ անտառի ապօրինի հատումների, իսկ 24 տոկոսը` չէր հայտնի (տե՛ս Աղյուսակ 8): Ավելի շատ գյուղական բնակիչներ (71 տոկոս), քան քաղաքային բնակիչներ են (65 տոկոս) ասել, որ կհայտնեին ապօրինի հատումների մասին: Նմանապես, ավելի շատ մարզերի բնակիչներ (69 տոկոս), քան Երևանի բնակիչներ (64 տոկոս) կդիմեին այդ քայլին:

Խնդիրներ, որոնք անտառազրկման են հանգեցնում Չայաստանում

Ըստ հարցվածների գնահատականների, ամենակարևոր խնդիրները, որոնք անտառազրկման են հանգեցնում Չայաստանում, հետևյալն են. անհատ գործարարները, որոնք փայտ են արտահանում Չայաստանից (միջինը = 9.4), անհատ գործարարները, որոնք փայտ են վաճառում Չայաստանում (միջինը = 9.1), և գյուղերից դուրս մարդիկ, որոնք ծառ են հատում վաճառքի համար (միջինը = 8.9): Այնուհետև նշվել են այն գյուղացիները, որոնք ծառ են հատում վաճառքի համար (միջինը = 8.1), և այն գյուղացիները, որոնք ծառ են հատում անձնական օգտագործման համար (միջինը = 6.7) (տե՛ս Աղյուսակ 14):

Լուծումներ, որոնք կարող են օգնել փրկելու անտառները Չայաստանում

Չայաստանի անտառների փրկությանն ուղղված լուծումները գնահատելիս՝ հարցվածներն ամենաբարձր գնահատականը տվել են Չայաստանի բոլոր տնային տնտեսություններին գազը հասանելի դարձնելու լուծմանը (միջինը = 9.5): Հետևյալ լուծումներն ստացել են փոքր-ինչ ավելի ցածր գնահատականներ. կառավարության կողմից փողի հատկացում՝ ծառեր տնկելու և անտառները վերականգնելու համար (միջինը = 9.3), տնային տնտեսություններին ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրում՝ գազ անցկացնելու համար (միջինը = 9.0), և կառավարության կողմից փողի հատկացում՝ անտառները հսկելու համար (միջինը = 8.8) (տե՛ս Աղյուսակ 15):

Մարզերի բնակիչները Երևանի բնակիչների համեմատությամբ ավելի բարձր գնահատականներ են տվել գազին առնչվող լուծումներին. գազը հասանելի դարձնել և գազ անցկացնելու համար ցածր տոկոսադրույքով վարկեր տրամադրել: Գազ չունեցող գյուղերի բնակիչներն ավելի բարձր են գնահատել Չայաստանի բոլոր տնային տնտեսությունները գազով ապահովելու լուծումը, քան գազ ունեցող գյուղերի բնակիչները:

Կառավարության մասնակցությունը


Գրեթե բոլոր հարցվածները (95 տոկոս) համաձայնել են այն ձևակերպմանը, որ «Չայաստանի կառավարությունը պետք է թույլ չտա փայտանյութի արտահանումը», ընդ որում մոտ 47 տոկոսը նշել է, որ խիստ համաձայն է այդ կարծիքին (տե՛ս Աղյուսակ 13գ):

Անտառահատումների մասին գիտելիքի մակարդակը

Հարցվածների մոտ 60 տոկոսը նշել է թթվածնի պակասը որպես անտառտարածքների կորստի հիմնական ազդեցությունը իրենց և իրենց ընտանիքների վրա, մինչդեռ 11 տոկոսը մատնանշել է հանգստի և ժամանցի համար վայրերի պակասությունը: Հարցվածների գրեթե յոթ տոկոսը չի կարողացել նշել ազդեցության որևէ օրինակ, և միայն 13 տոկոսն է հայտնել, որ անտառների կորուստը ոչ մի ազդեցություն չունի (տե՛ս Աղյուսակ 7):

Հարցվածների 92 տոկոսը հայտնել է, որ անտառային հողերի կրճատման արդյունքում սնկերը, խոտաբույսերը և հատապտուղները կարող են անհետանալ: Եվս 92 տոկոսը որպես անտառային հողերի կրճատման հետևանք նշել է միկրոկլիմայի փոփոխությունը, 90 տոկոսը՝ կենսաբազմազանության կորուստը, 80 տոկոսը՝ անապատացումը, 78 տոկոսը՝ հողի էրոզիան և կորուստը, 75 տոկոսը՝ սողանքները, 70 տոկոսը՝ աղբյուրների և գետերի ցամաքումը, և 64 տոկոսը՝ հողի աղակալումը (տե՛ս Աղյուսակ 9 և Գծապատկեր Բ): Հարցվածների գրեթե 20 տոկոսը չի կարողացել պատասխանել հողի աղակալման մասին հարցին:

Գծապատկեր Բ. «Այո» պատասխանները հետևյալ հարցին. «Ասացեք խնդրեմ, արդյոք նշած երևույթները կարո՞ղ են առաջանալ անտառային հողերի կրճատման պատճառով»:



Հարցվածների համար կրկին թվարկել են վերոհիշյալ ութ երևույթները և խնդրել են նշել անտառահատման ամենաբացասական հետևանքը: Հարցվածների կողմից նշված առաջին չորս բացասական հետևանքներն են. միկրոկլիմայի փոփոխությունը (30 տոկոս), անապատացումը (27 տոկոս), աղբյուրների և գետերի ցամաքումը (16 տոկոս) ու կենսաբազմազանության կորուստը (11 տոկոս) (տե՛ս Աղյուսակ 10): Երկու անգամ ավելի շատ անտառներին մոտ գտնվող գյուղերի բնակիչներ (29 տոկոս), քան անտառներից հեռու գտնվող գյուղերի բնակիչներ են (14 տոկոս) նշել աղբյուրների և գետերի ցամաքումը որպես անտառահատման ամենաբացասական հետևանք, մինչդեռ ավելի շատ անտառներից հեռու գտնվող գյուղերի բնակիչներ (29 տոկոս), քան անտառներին մոտ գտնվող գյուղերի բնակիչներ են (20 տոկոս) նշել անապատացումը և միկրոկլիմայի փոփոխությունը:

Անտառների օգտագործումը

Հարցվածների համար թվարկել են անտառների օգտագործման մի շարք օրինակներ և խնդրել են պատասխանել, թե ինչ նպատակներով են իրենք կամ իրենց ընտանիքի անդամները գնում անտառ Հայաստանում: Հարցվածների մեծամասնությունը (72 տոկոս) գնում է անտառ հանգստի և ժամանցի նպատակով: Հարցվածների 49 տոկոսը գնում է անտառ՝ ոչ փայտանյութ, այլ օրինակ, խոտաբույսեր հավաքելու նպատակով: Մոտ 14 տոկոսն իրենց տան համար վառելափայտ է հավաքում անտառում, մինչդեռ, ոչ զարմանալիորեն, հարցվածների միայն մեկ տոկոսն է հայտնել, որ գնում է անտառ՝ վաճառքի համար ծառ հատելու նպատակով (տե՛ս Աղյուսակ 16):

Գյուղական բնակիչների 30 տոկոսը և քաղաքային բնակիչների միայն հինգ տոկոսն են անտառում իրենց տան համար վառելափայտ հավաքում: Շատ ավելի մարզերի բնակիչներ (20 տոկոս), քան Երևանի բնակիչներ են (երեք տոկոս) գնում անտառ՝ իրենց տան համար վառելափայտ հավաքելու նպատակով: Նմանապես, շատ ավելի անտառներին մոտ գտնվող գյուղերի բնակիչներ (58 տոկոս), քան անտառներից հեռու գտնվող գյուղերի բնակիչներ են (յոթ տոկոս) հայտնել, որ գնում են անտառ այդ նպատակով: Բացի այդ, գոյություն ունի տարբերություն գյուղում գազի առկայության հիման վրա. գազ չունեցող

գյուղերի բնակիչների մոտ 37 տոկոսը և գազ ունեցող գյուղերի բնակիչների 27 տոկոսն են նշել, որ իրենք վառելափայտ են հավաքում անտառում:

Բոլոր այն գյուղական բնակիչները (հարցման 5 մասնակից), որոնք հայտնել են, որ գնում են անտառ վաճառքի համար ծառ հատելու նպատակով, բնակվում են անտառներից մոտ գտնվող գյուղերում:

Աղյուսակ 1. Հարցազրույցների քանակն ըստ մարզերի՝ ՀՀ մարդահամարի տվյալների հետ համեմատած			
	Քանակը	Տոկոսը	ՀՀ 2001 մարդահամարի տվյալները
Երևան	351	34.9	34.3
Արագածոտն	43	4.3	4.3
Արարատ	85	8.4	8.5
Արմավիր	86	8.5	8.6
Գեղարքունիք	73	7.3	7.4
Լոռի	89	8.8	8.9
Կոտայք	85	8.4	8.5
Շիրակ	88	8.7	8.8
Սյունիք	47	4.7	4.8
Տավուշ	42	4.2	4.2
Վայոց Ձոր	17	1.7	1.7
Ընդամենը	1006	100.0	100.0

Աղյուսակ 2. Հարցազրույցների քանակն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի՝ ՀՀ մարդահամարի տվյալների հետ համեմատած			
	Քանակը	Տոկոսը	ՀՀ 2001 մարդահամարի տվյալները
Քաղաքային	650	64.6	64.3
Գյուղական	356	35.4	35.7
Ընդամենը	1006	100.0	100.0

Աղյուսակ 3. Հարցազրույցների քանակն անտառներին մոտ և անտառներից հեռու գտնվող գյուղերում		
	Քանակը	Տոկոսը
անտառներին մոտ գյուղեր	163	45.8
անտառներից հեռու գյուղեր	193	54.2
Ընդամենը	356	100.0

Աղյուսակ 4. Հարցազրույցների քանակը գազ ունեցող և գազ չունեցող գյուղերում		
	Քանակը	Տոկոսը
գազ ունեցող գյուղեր	245	68.8
գազ չունեցող գյուղեր	111	31.2
Ընդամենը	356	100.0

Աղյուսակ 5. Հարցազրույցների քանակն ըստ Երևանի և տասը մարզերի՝ ՀՀ մարդահամարի տվյալների հետ համեմատած			
	Քանակը	Տոկոսը	ՀՀ 2001 մարդահամարի տվյալները
Երևան	351	34.9	34.3
Մարզեր	655	65.1	65.7
Ընդամենը	1006	100.0	100.0

Աղյուսակ 6. Հարցվածների հետաքրքրության աստիճանը Հայաստանում անտառների պահպանության նկատմամբ				
	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը**	Գումարային տոկոսը
չատ հետաքրքրված եմ	535	53.2	53.7	53.7
որոշ չափով հետաքրքրված եմ	343	34.1	34.4	88.1
որոշ չափով հետաքրքրված չեմ	29	2.9	2.9	91.0
բոլորովին հետաքրքրված չեմ	90	8.9	9.0	100.0
չգիտեմ/չեմ կարող ասել	9	0.9	100.0	
Ընդամենը	1006	100.0		
Միջինը=1.67, Սոդան=1, Մեդիանը=1.00 (1=չատ հետաքրքրված եմ և 4=բոլորովին հետաքրքրված չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)				
**Իրական տոկոսն առանց «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխանների է				

Աղյուսակ 7. Անտառտարածքների կորստի հիմնական ազդեցությունը հարցվածների և իրենց ընտանիքների վրա		
<i>(բաց հարց է, դասակարգված նվազման կարգով)</i>		
	Քանակը	Տոկոսը
ոչ մաքուր օդ/թթվածնի պակաս	603	59.9
հանգստի և ժամանացի համար վայրերի պակասություն	111	11.0
առողջության հետ կապված խնդիրներ	66	6.6
էկոլոգիական ճգնաժամ	39	3.9
վառելափայտի կորուստ	20	2.0
վնաս բնությանը	16	1.6
կլիմայի փոփոխություն	14	1.4
կենսաբազմազանության կորուստ	12	1.2
ջրի պակասություն	8	0.8
հոգեբանական ազդեցություն	7	0.7
անապատացում	7	0.7
մարդկության բնաջնջման վտանգ	6	0.6
աղբյուրների ու գետերի ցամաքում	5	0.5
երկրում տնտեսական ոչ կայուն իրավիճակ	4	0.4
այլ	9	0.9
ոչ մի ազդեցություն	13	1.3
չգիտեմ/չեմ կարող ասել	66	6.6
Ընդամենը	1006	100.0

Աղյուսակ 8. Չարցվածները կտեղեկացնեին, եթե անտառի ապօրինի հատումների ականատես լինեին		
	Քանակը	Տոկոսը
այո	676	67.2
ոչ	245	24.4
չգիտեմ/չեմ կարող ասել	85	8.4

Աղյուսակ 9. Անտառային հողերի կրճատման հետևանքները						
<i>(դասակարգված նվազման կարգով)</i>						
		Այո	Ոչ	Զգիտեմ/չեմ կարող ասել	Զեմ հասկանում	Ընդամենը
սնկերի, խոտաբույսերի և հատապտուղների կորուստ	Քանակը	927	48	29	2	1006
	տոկոսը	92.1	4.8	2.9	0.2	100.0
միկրոկլիմայի փոփոխություն	Քանակը	922	37	35	12	1006
	տոկոսը	91.7	3.7	3.5	1.2	100.0
կենսաբազմազանության կորուստ	Քանակը	905	36	40	25	1006
	տոկոսը	90.0	3.6	4.0	2.5	100.0
անապատացում	Քանակը	807	143	52	4	1006
	տոկոսը	80.2	14.2	5.2	0.4	100.0
հողի էրոզիա և կորուստ	Քանակը	784	109	78	35	1006
	տոկոսը	77.9	10.8	7.8	3.5	100.0
սողանքներ	Քանակը	750	107	91	58	1006
	տոկոսը	74.6	10.6	9.0	5.8	100.0
աղբյուրների և գետերի ցամաքում	Քանակը	702	201	89	14	1006
	տոկոսը	69.8	20.0	8.8	1.4	100.0
հողի աղակալում	Քանակը	645	112	199	50	1006
	տոկոսը	64.1	11.1	19.8	5.0	100.0

Աղյուսակ 10. Անտառահատման ամենաբացասական հետևանքը			
<i>(դասակարգված նվազման կարգով)</i>			
	Քանակը	Տոկոսը	Գումարային տոկոսը
միկրոկլիմայի փոփոխություն	306	30.4	30.4
անապատացում	269	26.7	57.2
աղբյուրների և գետերի ցամաքում	156	15.5	72.7
կենսաբազմազանության կորուստ	108	10.7	83.4
սողանքներ	61	6.1	89.5
սնկերի, խոտաբույսերի և հատապտուղների կորուստ	37	3.7	93.1
հողի էրոզիա և կորուստ	35	3.5	96.6
հողի աղակալում	17	1.7	98.3
ոչ մի հետևանք	2	0.2	98.5
չզգիտեմ/չեմ կարող ասել	15	1.5	100.0
Ընդամենը	1006	100.0	

Աղյուսակ 11ա. Որքան կարևոր է Չայաստանի հասարակության համար երկարաժամկետ ապահովել փայտի պաշարը

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
շատ կարևոր է	420	41.7	43.0	43.0
որոշ չափով կարևոր է	393	39.1	40.3	83.3
որոշ չափով կարևոր չէ	78	7.8	8.0	91.3
բոլորովին կարևոր չէ	85	8.4	8.7	100.0
չգիտեմ/չեմ կարող ասել	30	3.0	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Միջինը=1.82, Մոդան=1, Սեդիանը=2.00 (1=շատ կարևոր է և 4=բոլորովին կարևոր չէ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 11բ. Որքան կարևոր է Չայաստանի հասարակության համար երկարաժամկետ պահպանել բույսերի և կենդանիների բազմազանությունը

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
շատ կարևոր է	772	76.7	77.7	77.7
որոշ չափով կարևոր է	185	18.4	18.6	96.3
որոշ չափով կարևոր չէ	32	3.2	3.2	99.5
բոլորովին կարևոր չէ	5	0.5	0.5	100.0
չգիտեմ/չեմ կարող ասել	12	1.2	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Միջինը=1.27, Մոդան=1, Սեդիանը=1.00 (1=շատ կարևոր է և 4=բոլորովին կարևոր չէ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 11գ. Որքան կարևոր է Չայաստանի հասարակության համար երկարաժամկետ ապահովել անտառները հանգստի և ժամանցի համար

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
շատ կարևոր է	715	71.1	71.5	71.5
որոշ չափով կարևոր է	243	24.2	24.3	95.8
որոշ չափով կարևոր չէ	32	3.2	3.2	99.0
բոլորովին կարևոր չէ	10	1.0	1.0	100.0
չգիտեմ/չեմ կարող ասել	6	0.6	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Միջինը=1.34, Մոդան=1, Սեդիանը=1.00 (1=շատ կարևոր է և 4=բոլորովին կարևոր չէ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 11դ. Որքան կարևոր է պաշտպանել Ֆայաստանի հասարակությանը այնպիսի բացասական ազդեցություններից, ինչպիսիք են անապատացումը, հողի էրոզիան և ջրհեղեղները

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
շատ կարևոր է	748	74.4	76.5	76.5
որոշ չափով կարևոր է	190	18.9	19.4	95.9
որոշ չափով կարևոր չէ	22	2.2	2.2	98.2
բոլորովին կարևոր չէ	18	1.8	1.8	100.0
չգիտեմ/չեն կարող ասել	28	2.8	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Միջինը=1.29, Սողան=1, Մեդիանը=1.00 (1=շատ կարևոր է և 4=բոլորովին կարևոր չէ, «չգիտեմ/չեն կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 12. Ֆայաստանում անտառների պահպանությամբ բավարարվածության աստիճանը

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
շատ բավարարված են	67	6.7	7.1	7.1
որոշ չափով բավարարված են	336	33.4	35.6	42.6
որոշ չափով բավարարված չեն	131	13.0	13.9	56.5
բոլորովին բավարարված չեն	411	40.9	43.5	100.0
չգիտեմ/չեն կարող ասել	61	6.1	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Միջինը=2.94, Սողան=4, Մեդիանը=3.00 (1=շատ բավարարված են և 4=բոլորովին բավարարված չեն; «չգիտեմ/չեն կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 13ա. Յուրաքանչյուր անձ Ֆայաստանում պետք է անձնական պատասխանատվություն կրի շրջակա միջավայրի համար

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
խիստ համաձայն են	595	59.1	59.7	59.7
համաձայն են	386	38.4	38.7	98.4
համաձայն չեն	16	1.6	1.6	100.0
բոլորովին համաձայն չեն	0	0.0	0.0	
չգիտեմ/չեն կարող ասել	9	0.9	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Միջինը=1.42, Սողան=1, Մեդիանը=1.00 (1=խիստ համաձայն են և 4=բոլորովին համաձայն չեն, «չգիտեմ/չեն կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 13բ. Անտառահատումը լուրջ խնդիր է Ֆայաստանում				
	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
խիստ համաձայն եմ	540	53.7	54.8	54.8
համաձայն եմ	396	39.4	40.2	95.0
համաձայն չեմ	48	4.8	4.9	99.9
բոլորովին համաձայն չեմ	1	0.1	0.1	100.0
չգիտեմ/չեմ կարող ասել	21	2.1	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Միջինը=1.50, Սոդան=1, Սեդիանը=1.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 13գ. Ստահոգված եմ, որ իմ երեխաներն ապրելու են ավելի վատ շրջակա միջավայրում, քան մենք հիմա				
	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
խիստ համաձայն եմ	416	41.4	44.3	44.3
համաձայն եմ	405	40.3	43.2	87.5
համաձայն չեմ	113	11.2	12.0	99.6
բոլորովին համաձայն չեմ	4	0.4	0.4	100.0
չգիտեմ/չեմ կարող ասել	68	6.8	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Միջինը=1.69, Սոդան=1, Սեդիանը=2.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 13դ. Եթե աղքատությունը նվազեր, ապա կնվազեր նաև վառելիքային համար անտառի ապօրինի օգտագործումը				
	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
խիստ համաձայն եմ	529	52.6	53.8	53.8
համաձայն եմ	396	39.4	40.2	94.0
համաձայն չեմ	54	5.4	5.5	99.5
բոլորովին համաձայն չեմ	5	0.5	0.5	100.0
չգիտեմ/չեմ կարող ասել	22	2.2	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Միջինը=1.53, Սոդան=1, Սեդիանը=1.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 13ե. Մենք դեռ բավականին շատ անտառներ ունենք Հայաստանում, և անտառահատումը լուրջ խնդիր չէ

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	21	2.1	2.2	2.2
համաձայն եմ	118	11.7	12.2	14.4
համաձայն չեմ	499	49.6	51.5	65.9
բոլորովին համաձայն չեմ	330	32.8	34.1	100.0
չգիտեմ/չեմ կարող ասել	38	3.8	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Միջինը=3.18, Սոդան=3, Մեդիանը=3.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 13զ. Հայաստանի կառավարությունը պետք է թույլ չտա փայտանյութի արտահանումը

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	449	44.6	46.9	46.9
համաձայն եմ	462	45.9	48.2	95.1
համաձայն չեմ	40	4.0	4.2	99.3
բոլորովին համաձայն չեմ	7	0.7	0.7	100.0
չգիտեմ/չեմ կարող ասել	48	4.8	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Միջինը=1.59, Սոդան=2, Մեդիանը=2.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 13է. Հայաստանի այսպես կոչված էկոլոգիական ճգնաժամը չափազանցված է

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	24	2.4	2.8	2.8
համաձայն եմ	225	22.4	26.0	28.8
համաձայն չեմ	407	40.5	47.1	75.8
բոլորովին համաձայն չեմ	209	20.8	24.2	100.0
չգիտեմ/չեմ կարող ասել	141	14.0	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Միջինը=2.93, Սոդան=3, Մեդիանը=3.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 13բ. Անտառները պետք է փրկել՝ ի օգուտ մարդկանց և շրջակա միջավայրի

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	529	52.6	52.9	52.9
համաձայն եմ	469	46.6	46.9	99.8
համաձայն չեմ	2	0.2	0.2	100.0
բոլորովին համաձայն չեմ	0	0.0	0.0	
չգիտեմ/չեմ կարող ասել	6	0.6	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Միջինը=1.47, Սոդան=1, Մեդիանը=1.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 13թ. Կարելի է փայտ հավաքել անտառներից՝ ճիշտ և ռացիոնալ կառավարման դեպքում

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	427	42.4	42.9	42.9
համաձայն եմ	540	53.7	54.2	97.1
համաձայն չեմ	23	2.3	2.3	99.4
բոլորովին համաձայն չեմ	6	0.6	0.6	100.0
չգիտեմ/չեմ կարող ասել	10	1.0	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Միջինը=1.61, Սոդան=2, Մեդիանը=2.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 13ժ. Հայաստանում անտառների վիճակը չի վատացել վերջին հինգ տարիների ընթացքում

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	80	8.0	9.6	9.6
համաձայն եմ	248	24.7	29.7	39.3
համաձայն չեմ	337	33.5	40.4	79.6
բոլորովին համաձայն չեմ	170	16.9	20.4	100.0
չգիտեմ/չեմ կարող ասել	171	17.0	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Միջինը=2.71, Սոդան=3, Մեդիանը=3.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 14. Հայաստանում անտառազրկման հանգեցնող խնդիրներին տրված գնահատականների միջին արժեքները			
<i>(դասակարգված նվազման կարգով)</i>			
	Միջինը	Մոդան	Մեդիանը
Անհատ գործարարները, որոնք փայտ են արտահանում Հայաստանից	9.38	10	10.00
Անհատ գործարարները, որոնք փայտ են վաճառում Հայաստանում	9.13	10	10.00
Գյուղերից դուրս մարդիկ, որոնք ծառ են հատում վաճառքի համար	8.90	10	10.00
Գյուղացիները, որոնք ծառ են հատում վաճառքի համար	8.13	10	9.00
Գյուղացիները, որոնք ծառ են հատում անձնական օգտագործման համար	6.71	10	7.00
Անասունների արածեցումը	3.53	1	2.00
<i>(1=բոլորովին խնդիր չէ և 10=չատ կարևոր խնդիր է, «չգիտեմ» և «չեմ հասկանում» պատասխաններն ընդգրկված չեն)</i>			

Աղյուսակ 15. Հայաստանում անտառների փրկությանն ուղղված լուծումներին տրված գնահատականների միջին արժեքները			
<i>(դասակարգված նվազման կարգով)</i>			
	Միջինը	Մոդան	Մեդիանը
Գազը հասանելի դարձնել Հայաստանի բոլոր տնային տնտեսություններին	9.49	10	10.00
Կառավարությունը փող հատկացնի՝ ծառեր տնկելու և անտառները վերականգնելու համար	9.34	10	10.00
Տնային տնտեսություններին տրամադրել ցածր տոկոսադրույքով վարկեր՝ գազ անցկացնելու համար	9.03	10	10.00
Կառավարությունը փող հատկացնի՝ անտառները հսկելու համար	8.84	10	10.00
<i>(1=լուծում չէ և 10=գերազանց լուծում է, «չգիտեմ» և «չեմ հասկանում» պատասխաններն ընդգրկված չեն)</i>			

Աղյուսակ 16. Ինչ նպատակներով են հարցվածները կամ իրենց ընտանիքի անդամները գնում անտառ Հայաստանում				
		Այո	Ոչ	Ընդամենը
Հանգստի/ժամանցի նպատակով	Քանակը	727	279	1006
	տոկոսը	72.3	27.7	100.0
Ոչ փայտանյութ, այլ օրինակ, խոտաբույսեր հավաքելու նպատակով	Քանակը	497	509	1006
	տոկոսը	49.4	50.6	100.0
Տան համար վառելափայտ հավաքելու նպատակով	Քանակը	140	866	1006
	տոկոսը	13.9	86.1	100.0
Վաճառքի համար ծառ հատելու նպատակով	Քանակը	14	992	1006
	տոկոսը	1.4	98.6	100.0

Աղյուսակ 17. Հարցվածների սեռը		
	Քանակը	Տոկոսը
տղամարդ	324	32.2
կին	682	67.8
Ընդամենը	1006	100.0

Աղյուսակ 18. Հարցվածների տարիքը		
	Միջինը	Մեդիանը
	44.96	45.00
	Նվազագույնը	Առավելագույնը
	18	75

Խաչաձև աղյուսակ 1ա. Գարցվածները կտեղեկացնեին, եթե անտառի ապօրինի հատումների ականատես լինեին՝ ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի

		Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
այո	Քանակը	422	254	676
	տոկոսը	64.9	71.3	67.2
ոչ	Քանակը	169	76	245
	տոկոսը	26.0	21.3	24.4
չգիտեմ/չեմ կարող ասել	Քանակը	59	26	85
	տոկոսը	9.1	7.3	8.4
Ընդամենը	Քանակը	650	356	1006
	տոկոսը	100.0	100.0	100.0

Խաչաձև աղյուսակ 1բ. Գարցվածները կտեղեկացնեին, եթե անտառի ապօրինի հատումների ականատես լինեին՝ ըստ Երևանի և տասը մարզերի

		Երևան	Մարզեր	Ընդամենը
այո	Քանակը	224	452	676
	տոկոսը	63.8	69.0	67.2
ոչ	Քանակը	94	151	245
	տոկոսը	26.8	23.1	24.4
չգիտեմ/չեմ կարող ասել	Քանակը	33	52	85
	տոկոսը	9.4	7.9	8.4
Ընդամենը	Քանակը	351	655	1006
	տոկոսը	100.0	100.0	100.0

Խաչածև աղյուսակ 2. Անտառահատման ամենաբացասական հետևանքը՝ ըստ անտառների մոտ կամ անտառներից հեռու գտնվող գյուղերի				
		Անտառներից մոտ գյուղեր	Անտառներից հեռու գյուղեր	Ընդամենը
աղբյուրների և գետերի ցամաքում	Քանակը	48	27	75
	տոկոսը	29.4	14.0	21.1
անապատացում	Քանակը	32	56	88
	տոկոսը	19.6	29.0	24.7
միկրոկլիմայի փոփոխություն	Քանակը	32	56	88
	տոկոսը	19.6	29.0	24.7
կենսաբազմազանության կորուստ	Քանակը	17	22	39
	տոկոսը	10.4	11.4	11.0
սնկերի, խոտաբույսերի և հատապտուղների կորուստ	Քանակը	12	8	20
	տոկոսը	7.4	4.1	5.6
սողանքներ	Քանակը	8	7	15
	տոկոսը	4.9	3.6	4.2
հողի էրոզիա և կորուստ	Քանակը	5	9	14
	տոկոսը	3.1	4.7	3.9
հողի աղակալում	Քանակը	5	5	10
	տոկոսը	3.1	2.6	2.8
ոչ մի հետևանք	Քանակը	1	1	2
	տոկոսը	0.6	0.5	0.6
չգիտեմ/չեմ կարող ասել	Քանակը	3	2	5
	տոկոսը	1.8	1.0	1.4
Ընդամենը	Քանակը	163	193	356
	տոկոսը	100.0	100.0	100.0

Խաչածև աղյուսակ 3ա. Հարցվածները կամ իրենց ընտանիքի անդամները գնում են անտառ Հայաստանում՝ տան համար վառելափայտ հավաքելու նպատակով՝ ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի				
		Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
այո	Քանակը	32	108	140
	տոկոսը	4.9	30.3	13.9
ոչ	Քանակը	618	248	866
	տոկոսը	95.1	69.7	86.1
Ընդամենը	Քանակը	650	356	1006
	տոկոսը	100.0	100.0	100.0

Խաչածև աղյուսակ 3բ. Հարցվածները կամ իրենց ընտանիքի անդամները գնում են անտառ Հայաստանում՝ տան համար վառելափայտ հավաքելու նպատակով՝ ըստ Երևանի և տասը մարզերի				
		Երևան	Մարզեր	Ընդամենը
այո	Քանակը	10	130	140
	տոկոսը	2.8	19.8	13.9
ոչ	Քանակը	341	525	866
	տոկոսը	97.2	80.2	86.1
Ընդամենը	Քանակը	351	655	1006
	տոկոսը	100.0	100.0	100.0

Խաչածև աղյուսակ 3գ. Հարցվածները կամ իրենց ընտանիքի անդամները գնում են անտառ Հայաստանում՝ տան համար վառելափայտ հավաքելու նպատակով՝ ըստ անտառներին մոտ կամ անտառներից հեռու գտնվող գյուղերի				
		Անտառներին մոտ գյուղեր	Անտառներից հեռու գյուղեր	Ընդամենը
այո	Քանակը	95	13	108
	տոկոսը	58.3	6.7	30.3
ոչ	Քանակը	68	180	248
	տոկոսը	41.7	93.3	69.7
Ընդամենը	Քանակը	163	193	356
	տոկոսը	100.0	100.0	100.0

Խաչաձև աղյուսակ 3դ. Չարցվածները կամ իրենց ընտանիքի անդամները գնում են անտառ Չայաստանում՝ տան համար վառելափայտ հավաքելու նպատակով՝ ըստ գազ ունեցող և գազ չունեցող գյուղերի				
		Գազ ունեցող գյուղեր	Գազ չունեցող գյուղեր	Ընդամենը
այո	Քանակը	67	41	108
	տոկոսը	27.3	36.9	30.3
ոչ	Քանակը	178	70	248
	տոկոսը	72.7	63.1	69.7
Ընդամենը	Քանակը	245	111	356
	տոկոսը	100.0	100.0	100.0

Խաչաձև աղյուսակ 4. Չարցվածները կամ իրենց ընտանիքի անդամները գնում են անտառ Չայաստանում՝ վաճառքի համար ծառ հատելու նպատակով՝ ըստ անտառներին մոտ կամ անտառներից հեռու գտնվող գյուղերի				
		Անտառներին մոտ գյուղեր	Անտառներից հեռու գյուղեր	Ընդամենը
այո	Քանակը	5	0	5
	տոկոսը	3.1	0.0	1.4
ոչ	Քանակը	158	193	351
	տոկոսը	96.9	100.0	98.6
Ընդամենը	Քանակը	163	193	356
	տոկոսը	100.0	100.0	100.0